



ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM

بطريركية الأرمن القبطية في القدس

PATRIARCAT ARMÉNIEN DE JERUSALEM

28 Յունուար, 2002

Գերաշնորհ
Տ. Խաժակ Ա.բ. Պարսամբան
Առաջնորդ Միացեալ Նահանգաց
Հայց. Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի
Նիւ Եօրթ.

Սիրելի Սրբազան,

Հակառակ որ ժամանակէ մը ի վեր մահուան ստուերը կը ծանրանար ֆիզիքապէս տկարացող իր մարմինին շուրջ, խորունկ ցաւով ընդունեցինք «հոգիով ազնուական» Պր. Սուրեն Ֆէսեանին մեկնումը այս աշխարհէն, իրեն անմիջական եւ սիրելի ընտանիքի անդամներէն, զաւակներէն եւ թոռներէն, նաեւ իր «բարեգործ անձին» գործակցութիւնը եւ բարի կամեցողութիւնը վայելող աշխարհացրիւ բարեկամներէն, կրօնական, կրթական, մշակութային, ազգասիրական եւ մարդասիրական նպատակներու ծառայող հաստատութիւններէն եւ կազմակերպութիւններէն:

Friends of the Armenian Patriarchate of Jerusalem Յանձնախումբի գործունէութեան կապակցութեամբ, մեր շնորհակալութեան նամակն էր որ կը գրէինք իրեն Յունուար 2-ին, եւ կ'ըսէինք.-

«Սիրելի Պարոն Ֆէսեան, բազում տարիներու ձեր նուիրեալ գործունէութիւնը, եւ նախանձախնդրութեամբ հետապնդումները, կարելի դարձուցին, որ ձեր գործակիցներուն հետ ձեր "սերմանած բարի հունտերը" պտղաբերուին, եւ իրենց նպաստը բերեն Պատրիարքութեանս կրթական գործին, թէ՛ Ժառանգաւորաց Վարժարանի, եւ թէ՛ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի ջանքերը ֆաջալերելով:

«Իւր եղած է՛ հոգիով աշխոյժ եւ միտով արթուն, եւ Աստուծոյ կամփին համաձայն "բարեգործ": Եւ իբրեւ այդպիսին՝ երախտապարտ հոգիներու համար՝ օրհնութիւն:

«Կ'աղօթենք որ Աստուծոյ այդ օրհնութիւնը ձեր ընտանիքի բոլոր անդամներուն վրայ անպակաս մնայ, իբրեւ ձեզմէ ժառանգ մնացած թանկագին յիշատակ:»

Եւ այս պահուն կ'աղօթենք որ Տէրը ընդունի "ազնուական ու բարեգործ" այս հոգին, յաւիտեանական եւ երանական իր ներկայութեան:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:»

Սիրոյ Ողջունի եւ
Ցաւակցարար

Թորգոմ Ա.բ. Մանուկեան
Թորգոմ Ա.բ. Մանուկեան
Հայ Պատրիարք Երուսաղէմի